«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝ Արևիկ Եսայան

Մանկապարտեզ՝ « Կողբի թիվ 2 մսուր-մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն---------- 2

Տեսական մաս

Գլուխ 1---------- 4

Գլուխ 2

Հետազոտության ընթացքը---------- 8

Եզրակացություն---------- 13

Գրականության ցանկ---------- 14

Ներածություն

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ,որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:Ժամանակի պահանջները պարտադիր են նախադպրոցական հաստատությունների աշխատակիցներին՝ ուսուցման և տեղեկատվության նոր ձևերի որոնման համար:

Տարեցտարի կատարելագործվելով ,ավանդականին փոխարինում են ինտերակտիվ մեթոդներ ,որոնց կիրառումն ավելի արդյունավետ է դառնում հատկապես ինտեգրված պարապմունքներ կազմակերպելիս:

Ինտեգրված զբաղվածության համակարգը ներառում է որոշակի թեմաների էությունը բացահայտելու ընդունակություններ,կիրառելով այն մի քանի գործողություններ,որոնք փոխկապակցված են և լրացնում են իրար:

Նույն բովանդակության պարապմունքները երեխաների համար լինում են հոգնեցուցիչ :Նրանք կորցնում են հետաքրքրությունը տվյալ թեմայի նկատմամբ:Դաստիարակի նպատակն է ,պարապմունքների հիմնական նյութից չշեղվելով ,թեմայի նկատմամբ հետաքրքրասիրության պահպանումը:Վերջինիս լուծման միջոց է ինտեգրված պարապմունքը:Ուսումնասիրելով <<Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում >>թեման ,նպատակ ունեմ ավելի խորը ծանոթանալ ինտեգրված աշխատանքի տեխնոլոգիային ,որը թույլ է տալիս կատարել նախադպրոցական կրթության հիմնական խնդիրը ՝ապահովել երեխաների մտավոր,սոցիալական ֆիզիկական ,հուզական և գեղագիտական ոլորտների ներդաշնակ և համակողմանի զարգացումը:Ավելի խորը ուսումնասիրել և ծանոթանալ նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում գտած ինտերակտիվ մեթոդները և այն իրականացնել պրակտիկ աշխատանքում ՝ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով :

Թեման լիովին և խորը բացահայտելով ՝հնարավորություն կունենամ ,տարբեր

տեսակի գործողությունների ինտեգրմամբ ,կարճ ժամանակահատվածում հասնել իմ առջև դրված նպատակին ,որը թույլ չի տալիս ծանրաբեռնել երեխաներին և ավելի շատ ժամանակ թողնել այլ գործողությունների համար,ինչպիսիք են զբոսանքն ու բացօդյա խաղերը:Բացի դրանից սա դրական ազդեցություն է ունենում ուսման շարժառիթների վրա,քանի որ ինտեգրված օկուպացիան նախատեսում է երեխաների մեջ ակտիվ ներգրավվածություն ,խաղալ այն տարրերի միջոցով ,որը հայտնի է որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն:

Տեսական մաս

Գլուխ 1

<<Երեխան ունի տեսնելու,մտածելու,զգալու իր հատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան,քան նրանց այդ ունակությունը մերով փոխարինելու փորձը>>:

Ժան Ժակ Ռուսո

Ուսուցման կազմակերպման ավանդական ձևերը պարբերաբար մշակվում և կատարելագործվում են:Ուստի կարևորվում է միջառարկայական կապերի ստեղծումը:Այդ խնդիրը լուծում է ստանում ինտեգրված պարապմունքների միջոցով : Փորձը ցույց է տալիս ,որ փոխներգործուն մեթոդների կիրառումը նախադպրոցական տարիքի երեխաների համար պարապմունքները դարձնում է հաճելի ,զվարճալի և արդյունավետ ՝հատկապես,եթե դրանք անցկացվում են կերպարվեստային միջոցների և երաժշտության զուգակցմամբ:Այստեղ կարևոր է նաև այն ,որ ուսուցման գործընթացին մասնակցում են տվյալ տարիքային խմբի բոլոր երեխաները:

Ինտեգրված ուսուցման նպատակն այն է,որ ուսումնական գործընթացում երեխան ոչ թե պետք է նստի ,լռի,լսի,երբեմն էլ խոսի, այլ առավելապես պետք է գործի ,մասնակցի և պատասխանատվություն ստանձնի:Մենք խնդիր ունենք ուսուցումը դարձնել աշխատանքային գործընթաց,հակառակ դեպքում փոքր տարիքից երեխաների մեջ սերմանում ենք ծուլություն և անպատասխանատվություն: Ինտեգրված գործունեության ընթացքում ակտիվորեն զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները:Նրանք սովորում են համագործակցել հասակակիցների հետ:Բարձրանում է երեխայի ինքնագնահատականը ,հնարավորություն է ստեղծվում ճանաչողական գործընթացը դարձնել իսկապես հագեցված:Դա օգնում է

երեխաներին բացահայտելու իրենց ուժեղ կողմերը,ստեղծագործական ունակությունները,բավարարելու հետաքրքրությունները:Նման պարապմունքները

կարող են անցկացվել ինչպես ենթախմբերով ,այնպես էլ ամբողջ խմբի հետ՝ըստ պարապմունքի նպատակի ,տեսակի և ուսումնական նյութի:
Կարևորվում են պարապմունքների տեղի և ժամանակի ընտրությունը,դրանց անցկացման ձևերը,ուսումնական զարգացնող միջավայրը:Դրանք օգնում են երեխաներին այս կամ այն գործունեության ընթացքում առավելագույնս տրամադրվելու դաստիարակի կողմից առաջադրվող նյութի ընկալմանը:
Ուսուցման ընթացքում դաստիարակը հաշվի է առնում երեխաների անհատական տվյալները,այսինքն՝յուրաքանչյուր երեխա հնարավորություն է ստանում ուսումնական նյութը յուրացնել ըստ իր հոգեկան զարգացման ,խառնվածքի և ընկալման կարողությունների :Երեխաների նկատմամբ անհատական մոտեցումը բացառում է ուժեղների և թույլերի միջև հակասությունների առաջացումը և խորացումը;Ավելի բարդ առաջադրանքներ հանձնարարվում են ուժեղներին,այդ դեպքում չի արգելակվում նրանց զարգացումը և միևնույն ժամանակ միջին և թույլ հնարավորություններով երեխաների համար ուժերը փորձելու ,ինքնուրույն քայլեր անելու պայմաններ են ստեղծվում:Այսինքն ՝յուրաքանչյուր երեխա ազատ ընտրության և անհատական զարգացման հնարավորություն է ստանում ;Այս պարագայում նպաստավոր պայմաններ են ստեղծվում նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար:
Ինտեգրված պարապմունքների հիմնական խնդիրներն են՝
-Երեխայի համակողմանի դաստիարակությունը,կոնկրետ առարկաների մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը:
-Տարբեր հասկացությունների ինտեգրմամբ գործունեության տարբեր ձևերում երեխային ընդգրկելը:
-Ինտեգրված պարապմունքներն արդյունավետ են ,երբ անցկացվում են խաղային,ժամանակակից մեթոդներով :Ըստ Մոնտեսորիի ՝<< Այն խաղը,որը

ուսուցանող չէ՝դատարկ խաղ է>>:Ուսումնական գործընթացում խաղն ու պարապմունքները պետք է հանդես գան միաժամանակ ՝լրացնելով միմյանց:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս կիրառելու ուսուցման ինտերակտիվ մեթոդներ:Աշխատելով փոքր խմբերով,համագործակցելով հասակակիցների հետ,յուրաքանչյուր երեխա գտնվում է բավականին շահեկան և բարենպաստ պայմաններում:Այսպես՝

-Համագործակցելով հասակակիցների հետ,նա ավելի արագ է ինտեգրվում:

-Նույն ժամանակահատվածում խմբի բոլոր երեխաները զբաղված են:

-Համագործակցության ընթացքում բարձրանում է երեխայի ինքնագնահատականը:

-Երեխան հնարավորություն է ունենում ազատ ինքնաարտահայտվելու:

-Ակտիվ աշխատում և զարգանում են թե օժտված երեխաները ,թե թույլ կարողություն, թե առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:

-Երեխաները հնարավորություն են ունենում սովորել սեփական սխալների վրա:

-Ուսումը վեր է ածվում հաճելի համագործակցության:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերվում են ինտեգրված պարապմունքի հետևյալ տեսակները;

-միջառարկայական (երկու առարկաների միջև՝օր.մաթեմատիկա,ապլիկացիա)

-բազմառարկայական(երկուսից ավելի առարկաների միջև՝օր.մաթեմատիկա-կառուցողական-երաժշտություն):

Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես,որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի առարկաներից վերցրած գիտելիքների վրա:Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ,այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվում են հետևյալ պահանջները

.Նոր մեթոդների կիրառում

.փոխազդեցություն,փոխուսուցում

.երեխայի ակտիվություն

.համագործակցություն

.ինքնաարտահայտման խրախուսում

.հետադարձ կապ և այլն:

ԳԼՈՒԽ 2

Հետազոտության ընթացքը

Երեխաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն ունեն պարապմունքները,որի ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ:Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես ,որ անցումը երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն,տրամաբանական,սահուն և հիմնավորված:Շատ կարևոր է ճիշտ որոշել ,թե որ թեմաներից կարելի է կազմակերպել ինտեգրված պարապմունք,որտեղ կարող ենք պահպանել միջառարկայական կապեր,և որն է մեր պարապմունքի գլխավոր նպատակը:Երբ որոշված է ընդհանուր նպատակը,արդեն առարկաների բովանդակությունից ընտրում ենք այն տեղեկությունները ,որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար:Ինտեգրված պարապմունքները կարող են ծառայել նաև որպես ամփոփիչ պարապմունք:Ավելի հաճախ հարկավոր է դրանք օգտագործել որպես ամենօրյա պարապմունք:

Վերջին չորս տարիները աշխատում եմ որպես օրվա երկրորդ կեսի դաստիարակ:Բայց քառասուն երկար տարիներ աշխատել եմ որպես առաջին հերթի դաստիարակ:Ինտեգրված պարապմունքներ անց եմ կացրել վերջին տասը տարիների ընթացքում:Նախքան պարապմունք անցկացնելը որոշում էի

-ինտեգրված պարապմունքի անցկացման դրդապատճառներն ու նպատակները

-ինտեգրման ձևերն ու մեթոդները

-նյութի հաջորդականության կառուցվածքը

-նյութի ներկայացման միջոցները

-կազմում պարապմունքի պլանը և որոշում տևողությունը,խմբասենյակի դասավորությունը:

Հատկապես աշխատանքային կենտրոններում աշխատելիս,խմբասենյակը նախապատրաստել եմ այնպես,որ երեխաները հեշտությամբ աշխատեն մեծ և

փոքր խմբերով :Ցանկալի է,որ նստելու դիրքը կամ աթոռների դասավորությունը նպաստեն դրան:Աշխատել եմ ԽԻԿ համակարգով: Ինտեգրված պարապմունքների ժամանակ ինձ օգնում էր դաստիարակի օգնականը(ով նույնպես ունի մանկավարժական կրթություն), երբեմն էլ փոխարինող դաստիարակս:

ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ

Թեման -հեքիաթի վերապատմում՝ռուսական ժողովրդական հեքիաթ « Պալատիկը»

Ծրագրային բաղադրիչը-ԽՋ+ՄՏՊ+ԿԿԱ+ԻՇԱ

Տեսակը-Ինտեգրված պարապմունք 25-35 րոպե

Նպատակը-ստեղծել պայմաններ քերականորեն ճիշտ խոսք կառուցելու համար:

-Խոսող քարտի օգնությամբ նկարագրի տրված կենդանուն(արջ,նապաստակ)

-երկրաչափական պատկերներով ստանալ կենդանի և նշել,թե քանի պատկերից է ստացել(արջ,մուկ,նապաստակ)

-հաշվել քարտի վրա եղած կենդանիների քանակը և դնել համապատասխան թվանշանը

-նկարել և ծեփել հեքիաթից իրենց դուր եկած կենդանուն:Ընտրել և գունավորել սիրած կենդանու պատկերը

Վերջնարդյունք-վերապատմի .լսած հեքիաթը՝պահպանելով մայրենի լեզվի հնչյունների ճիշտ արտասանությունը և խոսքի քերականական կողմը: Կարողանալ հորինել նոր ավարտ:

Կարողություններ-լեզվական և հաղորդակցական կարողունակություն
Ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն
Մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն:

Անհրաժեշտ նյութեր -Մագնիսական գրատախտակի պերսոնաժներ՝կճուճ,մկնիկ,գորտ,նապաստակ,գայլ,աղվես,արջ: Ընտրության վահանակ,խոսող քարտեր,կենդանիների նկարներ՝եզրագծով պատկերված սպիտակ թղթին:Մկնիկի ,արջի,նապաստակի կտրված մարմնի մասեր՝երկրաչափական պատկերների տեսքով:Կերպարվեստային պարագաներ՝պլաստիլին,տակդիրներ,գունավոր մատիտներ և այլն:Խոշոր կառուցողական նյութեր:

Ընթացքը- խթանման փուլ
Հրավիրելով երեխաների ուշադրությունը՝ասել
-Երեխաներ,երեկ երեկոյան ,երբ բոլորդ արդեն տուն էիք գնացել մեր մանկապարտեզ հյուր էր եկել:Նա մեզ մի անակնկալ է արել:Տվել է այս ծրարը,բայց խնդրել է ծրարը բացել միայն այն դեպքում,երբ կկարողանանք լուծել իրեն առաջարկած հանելուկը:
-Կա մի հեքիաթ զարմանալի ,
Հերոսները վեց կենդանի՛
Բույն են դրել կճուճի մեջ
Դրսում մնաց բրդոտը խեղճ,
Ելավ նստեց կճուճի գլխին
Քանդեց տունը մյուսների:

Այո ՛,«Պալատիկ»հեքիաթն է:Ծրարից հանել պատկերազարդ գիրքը:
գիրքը:

Իմաստի ընկալման փուլ
Պատմել և ցուցադրել ռուսական ժողովրդական «Պալատիկ»հեքիաթը:Ապա առաջարկել հետևյալ հարցերը
-Որտե՞ղ էր գտնվում կճուճը:

-Ո՞վ առաջինը սկսեց ապրել պալատում:

-Է՞լ ովքեր ապրեցին այնտեղ:

-Ի՞նչ արեց արջը:

Այնուհետև իրար շարունակելով վերապատմել հեքիաթը,ապա հարցնել.

-Եթե արջը չբարձրանար տանիք և չկոտրեր,որիշ ինչ կլիներ:Ուրիշ ինչ ավարտ կարող եք հորինել:

Ֆիզ.դադար

Այնուհետև բացատրել,որ աշխատելու են աշխատանքային կենտրոններում և յուրաքանչյուր կենտրոնում ինչ աշխատանք են կատարելու.

-Բնագիտության կենտրոն՝խոսող քարտի օգնությամբ պատմել արջի,նապաստակի մասին:

-Մաթեմատիկայի կենտրոնում երկրաչափական պատկերներով ստանալ մկնիկ,աղվես:Նշել՝թե ինչ պատկեր են օգտագործել և քանի պատկերով են ստացել:

Հաշվել,թե քարտի վրա յուրաքանչյուր կենդանուց քանի հատ կա և դնել համապատասխան թվանշանը:

-Շինարարության կենտրոնում կառուցել նոր «պալատիկ»:

-Արվեստի կենտրոնում ծեփել և նկարել հեքիաթից իրենց սիրած կենդանուն:Գունավորել գորտի պատկերը:

Ընտրության վահանակի օգնությամբ երեխաները ընտրում են իրենց ցանկացած կենտրոնը,սկսում աշխատել և ներկայացնել իրենց

աշխատանքները:

Կշռադատման փուլ

Կանգնել շրջանաձև:Գնդակը գցելով երեխաներին հարցնել-դուր եկավ կենդանիների որոշումը

-Ո՞ր կենդանին ամենից շատ ձեզ դուր եկավ:

Տնօրենի դիտարկումը

Պարապմունքը պլանավորված էր,ձևակերպված էր պարապմունքի թեման,նպատակը,քայլերը և վերջնարդյունքները:Քայլերը բխում էին սահմանված նպատակից,փոխկապակցված էին:Դաստիարակը մոտիվացիա էր ստեղծում սաների մեջ և խթանում նրանց հետաքրքրությունը,պարապմունքի ընթացքում պահպանվում են բոլոր փուլերի սահուն հերթագայումները:Դաստիարակն ապահովում էր հետադարձ կապ յուրաքանչյուր սանի հետ և սանի ներգրավվածությունը պարապմունքի ընթացքում:Հարգանքով է վերաբերվում բոլոր սաներին,արձագանքում է սաների կարիքներին:Դաստիարակի և սաների կողմից ապահովվում էր դրական հուզական միջավայր պարապմունքի ընթացքում:Դաստիարակը հասավ իր նպատակին և տեղավորվեց ժամանակի մեջ:

Եզրակացություն

Այսպիսով՝ինտեգրված պարապմունքը,դա գործունեություն է,որն ուղղված է որոշակի թեմայի ամբողջական էության բացահայտմանը,տարբեր տեսակի գործունեության միջոցով,որոնք համակցված են գործունեության լայն տեղեկատվական դաշտում ՝փոխադարձ ներթափանցման և հարստացման միջոցով:Ինտեգրված պարապմունքի կառուցվածքը պահանջում է հատուկ

հստակություն,մտածված և տրամաբանական փոխկապակցվածություն տարբեր առարկաներից նյութերի թեմայի ուսումնասիրության բոլոր փուլերում:

Ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներից մեկին.կրթությունը պետք է լինի փոքր ծավալով ,բայց տարողունակ:

Ինտեգրված պարապմունքներում ապահովվում է երեխաների գործունեության տարբեր տեսակների առկայությունը՝համատեղելով տարբեր ոլորտների գիտելիքները:

Գրականության ցանկ

1.Մանկապարտեզի միջին խմբի (4-5տարեկանների)կրթական համալիր ծրագիր Երևան 2011

2.Ինտեգրված պարապմունքները՝որպես ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու միջոց:Լիանա Վերդյան «Նախաշավիղ»N8 2012թ

3.Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր միջին խումբ. Երևան 2023